



ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆՆԵՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Prof. G. Halemkarian Mech. 4100
N° 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիչը մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՆԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ հաշյոյն դրկի հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ. — Վ.Ս.Ն.Ա. (Պոլիարիա)

Редакция на вѣст.

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Irayounk“

VARNA (Bulgarie)

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՂՈՐԴԱՅԻՆ ԳՐԱՐՈՒՄԻՆ
էս չեն դրկուի եւ խաւար դաստա-
ները միայն կը հրատարակուին աւ-
սողջովին կամ մասամբ.
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
ֆեւ անկի անգամներու համար 20 0/0
գինը կը լինի:

«Իրաւունք»-ի բաժանորդ-
ներէն անոնք որ իրենց բաժնե-
գինը մինչեւ փետրվար 15 մեզ կը
հասցնեն, նոյնպէս անոնք որ փե-
տրվար 15-էն սկսեալ նոր բաժանորդ-
կը գրուին եւ բաժնեգինը կանխիկ
կը դրկեն, խմբագրութեան մէջ-
մէկ երգարան նուէր պիտի ստա-
նան: Իսկ անոնք որ փետրվար 15
էն մինչեւ նոյն ամսոյ վերջը իրենց
բաժնեգինը կը դրկեն մեզ՝ նուէր
կ'ստանան մէյմէկ Օրացոյց:

ՀԱՅ ԿԻՆԸ

Մեր անցեալ տարեշրջանին մէկէ
աւելի յօգուածներով արտասահ-
մանի հայ գաղթականաց վարք ու
բարքին նկատմամբ խօսած ըլլա-
լով անոնց տգեղ կողմերը ձաղկած
եւ լու կողմերը դրուատած էինք:
Բայց այդ յօգուածներ ընդհան-
րապէս միմիայն արական սեռի
նիստ ու կացին նուիրուած էին,
անոնց մէջ գաղթական հայ կնոջ
նկատմամբ շատ քիչ բան գրուած
էր. ուստի այս առթիւ նպատակս
է քիչ մ'ալ այս վերջինով զբաղիլ:
Սկիզբէն մինչեւ այս վերջին
տարիներս օտարներ Հայ ազգի ըն-
կերական ու ընտանեկան կեանքի
նկատմամբ շատ քիչ ծանօթու-
թիւն ունեցող կրցած էին. անոնց-
մէ շատեր հայ ընտանեկան կեանքը
նարկական կեանքի հետ կը շը-
փոթէին: Բայց յետոյ Հայաստան
ճանապարհորդող եւրոպացիներ
Հայ կնոջ ձիրքը ու դերը հետա-
զօտող յօգուածներով բաւական
որոշ գաղափար մը տուած են ի-
րենց ազգակիցներուն: Ամեն օտար
հրապարակագիր որ հայ կնոջ նը-
կատմամբ խօսած է, միշտ եւ ան-
խտիր հայուհին բարոյականու-
թեան եւ համեստութեան տիպար,
աշխատասէր եւ ծրարան տանտիկին
ցոյց տուած է: Օտար ժողովուրդ-
ներ այդ նկարագրութիւնը կար-
գալով, նպատակաւոր եւ շատ նպա-
տակաւոր գաղափար մը կազմած էին
մեր մայրերուն ու քոյրերուն նը-
կատմամբ. իսկ Պօլսը, Չիւսը,
նիսն եւ ուրիշ մեծ քաղաքներ այ-
ցիւղ օտարականներ՝ որք առիթ

ունեցած են համազգային ընտա-
նեկան ակումբներու մէջ հիւրա-
սիրութեամբ եւ կամ ընտրեալ հայ
դասակարգին հետ շփուելու, ա-
մենէ լու գաղափարը կազմած են
մեր տիկիներուն եւ օրորդներուն
մասին, եւ ինչպէս շատ մը բարձր
գիրք ունեցող օտարականներ այս
վերջիններուն ձեռքն իսկ խնդրած
են:

Նաեւ Հայրենիքէ դուրս օտար
հողի վրայ հին ժամանակներէ ի
վեր հաստատուած հայ գաղթա-
կանութեան գեղեցիկ սեռի ներ-
կայացոյցիչները իրենց համեստու-
թեամբը եւ նիստ ու կացովը հա-
յուկան ոչ նուազ պատուաբեր
հանգիստացած են, ի բաց առեալ
միքանի աւանդական սովորու-
թիւններ, որոնք արդի քաղաքա-
կրթութեան խորթ կը թուին,
բայց անպատուաբեր չեն:

Հոս տեսութիւնս պուկարահա-
յոցս մասնաւորելով, այս երկրին
մէջ 96 թուականէն ի վեր հայ կը-
նոջ յատուկ մի տարբեր երեւոյթ
պարզուած է ըսելու հարկին մէջ
կը դառնուինք: 96 Օգոստոսի դէպ-
քին հետեւանք, հայ գաղթակա-
նութեան բուն հասնքը գրեթէ
ամբողջ Պոլսի բնակչութեան, մաս-
նաւորապէս վաճառական բազմա-
կեդրոնի մը վերածեց. ամեն դա-
սակարգէ, հասակէ ու սեռէ հա-
ղարաւոր նորեկներ այս քաղաքի
ամեն անկիւնները մուտ գտան եւ
հայկական ցուցահանդէս մը պար-
գեցին իրենց ամեն գոյներովը:
Ընդհանուր առմամբ առիթը չա-
րաբաստիկ, երեւոյթը արգահա-
տելի բայց եւ այնպէս հետաքրք-
րական էր օտարներու տեսակէտով:
Այս նորեկներուն մէջ հարուստը
շատ քիչ էր, բարեկեցիկ դասա-
կարգը աղքատացած էր, իսկ աղ-
քատները բաւին բուն նշանակու-
թեամբ թշուառացիներ էին՝ որք
մեծամասնութիւն կը կազմէին:
Բայց անոնք բարեբաղդարար բա-
րերար ձեռքերէ նպատակաւորուե-
ցան, որով իրենց վիճակը շատ
մեծ փոփոխութիւն մը կրած չէ-
րաւ:

Ինչպէս անհատի մը, նոյնպէս
ազգի մը բարոյական ուժը եւ
խելական արժանիքը՝ դժբաղդու-
թեան օրերու մէջ է որ կը պար-
զուի. ընդհանրապէս հարուստ կամ
նիւթակաւ առաւելութիւններով
փայլող կարող կ'ըլլայ սեպի իր
տգեղ կողմերը ծածկելու: Հետեւ-
աբար հարուստին բարոյական
արժանիքը գիւրդութեամբ չենք
կարող որոշել եւ շատ անգամ կը
սխալինք: Բայց նիւթապէս ինկած,
հասարակական շատ մը վայելքներէ
զրկուած անհատի մը կամ ազգի
մը բարոյական մակարդակը, ոգ-
ւոյն վիճակները կամ ստորնու-
թիւնը փոքրիկ փորձով մը կը
պարզուի:

Այս մեր ըսածը ապացուցանող շատ
օրինակներ ամեն օր մեր աչքի
առնու կը ներկայանան. ապիւր,
բարի եւ նոյն իսկ բարեբար կար-
ծուած հարուստներ երբ իրենց կե-
դեւէն, ոսկիէն կամ դիրքէն կը
զրկուին, շատ անգամ իրենց կար-
ծեցեալ բարոյական յատկութիւն-
ներէն ալ զուրկ կը ներկայանան:
ահա այս վերջինն է իրենց ոգւոյն
խելական գոյնը. այլեւս կրնաւ
վճռել եւ ըսել թէ այնպիսիներ ի-
րենց ամբողջ կեանքին մէջ բնաւ
բարի եւ ազնիւ եղած չ'են, այլ
վարպետ կեղծաւորներ եւ խաբե-
րանք եղած են:

Հայ ազգը եւս վերջին յեղափո-
խութիւններէ առաջ եւ յեղափո-
խութեան տաք օրերուն մէջ՝ իր
ցոյց տուած բարոյական բարձրու-
թեամբը այն աստիճանի չէր կարող
իր իսկական արժանիքը պատկե-
րացնել, որքան վերջին այս դժ-
բաղդ օրերուն մէջ իր պահպանած
բարոյական դիրքովը ինքզինք
կրնայ ճանչցնել օտարներուն:

Հետեւաբար, այժմ մեր այս
դառն օրերուն մէջ աւելի պէտք
ունինք զմեզ պարկեշտ ու բարո-
յականի տէր բաղադրացիներ ցոյց
տալու քան թէ առաջ. մանաւանդ
օտար երկիրներուն մէջ, ուր բնիկ
ազգերը զմեզ վիճակի ազգի մը
հալածական ներկայացուցիչները
նկատելով կը հիւրընկալեն: Օտար-
ները կուզեն եւ կ'սպասեն մեր վրայ
տեսնել մտքի զարգացում, հոգեւոյ

վիճակիւն եւ անխառն բարոյա-
կանութիւն: Ուստի ամեն հայան-
հատ այս յատկութիւնները, եթէ
ոչ ամբողջովին, գէթ մասամբ յան-
ձին փայլեցնելու է, գոնէ ազ-
գային արժանապատուութիւնը
յաչս օտարաց վարկաբեկ չընելու
չափ:

Այժմ բուն խնդրոյն գալով,
գաղթական հայ կինը այն յատ-
կութեանց գէթ վերջինը, անխառն
բարոյական անուշաբոյս, իր վրայ փայ-
լեցնել պարտի, Բայց շատ ցաւալի
է ըսել որ 1896 ի գաղթական հա-
յուհիներէն ոմանք այնչափ գայ-
թակազական եւ այնչափ անպատուա-
բեր պատկերներ ներկայացուցին
ու ցարդ կը ներկայացնեն որ օ-
տարաց տուելու հայ ընտանեկան
պատիւը նսեմացնելու բնոյթ ու-
նին. բարեբախտաբար այդպիսի-
ներ շատ մեծ թիւ մը չ'են կազմեր,
սակայն եւ այնպէս հայ անուան
տակ անոնց գոյութիւնն ալ բաւա-
կան է ստեղծ վեց վիճակ մեր ա-
կանջները կարմրեցնելու:

Այդպիսիներ իրենց անձնական
պատիւին հետ օտարաց տուելու ազ-
գին պատիւն ալ կը ծախեն: Ուս-
տի ազգային արժանապատուու-
թեան նախանձախնդիր ամեն հայ
պարտի զանոնք ազգային շրջա-
նակի մէջ խրատել, յանդիմանել եւ
վերջապէս նշաւակել: Որովհետեւ
արտասահմանի մէջ անպատու հա-
յուհի մը հայութեան անպատու-
թիւն կարող է բերել:

Յ. Գ.

ՔԱՂԱՔԱՎԱՆ ՏԱՐԻՆ

2.

(4)

ՌՈՒՍԻԱ. եղաւ նախակարապետ Զի-
նաստանի զանազան դիրքերու գրաւ-
ման, նախապէս ինք երկուքն իւրա-
ցնելէ վերջ: Նշանաւոր եղաւ մանա-
ւանդ Ռուսաստանի արած այն իտեա-
լական զեկուցագրութիւնն. որոյ իրա-
կանութիւնը պիտի գովաբանուի դա-
րուց ի դարս: Այժմէս թիւն ստացած
ամէն հեռաւոր հարցերն յետաձգուեցան
Ռուսաստանէն. իսկ այժմէս թիւն չըս-
տացած ամէն հեռաւոր հարցերն ար-
ծարձուեցան նոյնպէս Ռուսաստանէն:
Այս երկու պարագաներուն մէջ Ռուսիա
լաւ մը սերտելով կանխապէս յայտնը-

ւած զանազան արամադրութիւններն, իմացաւ բոլոր հարկաւոր նախապատ-
րաստութեան մանրամասնութիւնն ա-
պագայ ամէն գործառնութեանց համար
թէ Ռուսիոյ կատարած այս խորագէտ
ուսումնասիրութիւններն իրեն պիտի
ներէկն «մեծ այո»ն արտասանել այն
բոլոր նախապատրաստութեանց հան-
դէպ, իր քաղաքական ապագայ գոր-
ծառնութեանց համար, զայս պիտի
յայտնէ միմիայն ապագան . . .

Է.

ՊԱՆԳԱՆԵԱՆ թերակղզւոյ մէջ միշտ
կը տիրապետէ նախանձն մակեղոնական
հարցի նկատմամբ՝ որոյ ներքին կացու-
թեան բարեկարգումն ա՛յնքան կը հե-
տաքրքրէ պուլիարական, սերպիական,
յուճական, չէրնագործան, ռուսման-
կան եւ աստորիական տէրութիւններն:
Հետեւաբար, Մակեղոնիոյ մէջ բնակող
զանազան ազգութիւններն իրենց հա-
մար իբրեւ պաշտպան կուսնեային վե-
րոյնչեալ տէրութիւններն. մեծամաս-
նութիւն կազմող այս զանազան ազ-
գութեանց պաշտպաններն կուղէին
տեսնել մակեղոնական ինքնավարու-
թիւնն, մինչդեռ մեծամասնութիւն չը
կազմող ազգութեանց պաշտպաններն
կուղէին վայելել թրքական ինքնավա-
րութիւնն ա՛յն բանաւոր առարկու-
թեամբ, որ մակեղոնական ինքնավա-
րութեան տակ՝ երկրին մեծամասնու-
թիւնն կազմող ազգութիւններն գեր-
իշխանային պիտի լինէին եւ, հետեւա-
բար մի օր եւս պիտի յայտարարէին
միաձայն իրենց գերիշխան կառավա-
րութիւնն. իսկ երկրին մեծամասնու-
թիւնն չկազմող ազգութիւններն կու-
րցստեան պիտի մատուցէին եւ չպիտի
կարենային մակեղոնական ինքնավա-
րութեան բէթիլին տակ պահպանել ի-
րենց ազգային իրաւունքներն: Թէ
ի՞նչպէս պիտի կարգադրուէր այս կոճ-
ռոտ հարցն, այդ միայն զիւանադիտու-
թեան գերագոր ալլահը գիտէ. . .

Ը.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ազգաց մէջ տեղի ու-
նեցան ամերիկո-սպանիական պատե-
րագին՝ որ փակուեցաւ Սպանիոյ կրած
գործնական պարտութեամբն, եւ անկո-
-ֆրանսական միջադէպն՝ որ փակուե-
ցաւ Ֆրանսայի կրած զիւանադիտական
պարտութեամբն: Ամերիկա այլեւս մը-
տած եղաւ Եւրոպայի մեծ տէրութեանց
չարքին մէջ, որով նա այսուհետեւ պի-
տի կրնայ անոնց հետ ձայնակից լինել
աշխարհակալութեանց խնդրոյն մէջ:
Ալգաւ-Լոնէնի հարցը չկրցաւ տակաւին
կարգադրուիլ. Ֆրանսա, ըստ երեւոյ-
թիւն, կը միտի հաշտարար կերպով մը
զայն կարգադրել՝ եւ ֆրանկո-գերմա-
նական այն ժամանակաւոր թշնամու-
թիւնն բառնալ ընդդէմ անկո-ֆրան-
սական այն մշտական թշնամութեան,
որ այնքան խոչնդոտներ կը յարուցա-
նէր Ֆրանսայի արտաքին քաղաքակա-
նութեան առջեւ:

Ալաքի

ՀԱՅՐԵՆԻՔԻ

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Ես հաւատացած եմ եւ-
կու Տեսակ դաստիարա-
կութիւններու՝ անհրաժեշ-
տութեան. ընտանիքի դաս-
տիարակութիւնն ու հայրե-
նիքի դաստիարակութիւնը:

Միշտ

(Շարունակութիւն նախորդ քիւն)

Մեր ազգն ալ, ի մասնաւորի ար-
տասահմանի Հայութիւնը, բարո-
յական անկման այդ ստորինն աս-

տիճաններուն վրայ կը գտնուի կար-
ծես: Ստրկական ոգին կը դաւա-
ճանէ իրեն քծնելու ամեն բանի
առջեւ: Իր հասարակային գոր-
ծիչները ժողովրդականութիւն վա-
տրկելու ստրկական հակումէն մը-
զուտ, ամեն ստորնութիւն կը
գործեն առանց խղճահարութեան:
Շատեր այն աստիճան փոքրօքի
եւ նուաստ են որ, մինչեւ անգամ
կը պարծենան իրենց ճշգրիտական
խարդախութեամբ եւ օձի պէս գա-
լարուելով ճշմարտութենէն ետ ու-
ղալու վարպետութեամբ: Ա՛նք
կը սիրեն երկնց մտքերը ծածուկ
պահել ու խոյս տալ զանոնք քա-
ցորոշ յայտնելէ, որ գուցէ իրենց
համար գէշ հետեւանք կուենայ:
Այսօր որ ամբոխը քաղաքական
իշխանութեան հասած է, ամեն ոք
կաշխատի անոյ խօսքերով շողո-
մել ու գրաւել անոր սիրտը: Ամ-
բոխին կը վերագրեն այն տեսակ
յատկութիւններ որ չունի եւ ինքն
ալ գիտէ թէ չունի: Շատ կը զղու-
շանան առողջ բայց անախորժ ճըշ-
մարտութիւններ յայտնելէ, եւ ամ-
բոխին սիրտը շահելու համար ա-
նոր անպիսի մտքերուն համակիր
կը ձեւանան որոնց անգործադրելի
ըլլալը իրենց ալ բաւ յայտնի է:
Այդ կարգի գործիչները իրենց
սովորական զբաղումը բրած են սրբ-
ճարաններու մէջ ճոռուտաւանդ կամ
հասարակաց վայրերու մէջ պու-
տախօսել, իսկապէս ողնիւ ու ճըշ-
մարտասէր անձերը հալածել, նոյն
իսկ անոնց անձնական շահերու
դէմ դաւաճանել կամ անանուն գը-
րութիւններով ուռուցիկ սպառնա-
լիքներ կարգաւ: Այդ անձերը ի-
րենց տան մէջ տեսակ մը կարծիք
ունին իսկ հրապարակի վրայ ու-
րիշ. կը գովեն հրապարակաւ,
ինչ որ կատեն իրենց սրտին խո-
րէն: Երեսպաշտութիւնը այլեւս
անսրբ բան մը չէ անոնց համար:
Լաւ դիրք ունեցող, կրթուած եւ
իսկապէս աղնիւ մարդու համակ-
րանքը չէ որ կը ջանան վաստկիլ,
այլ գուհիկ, անապայ եւ իսպառ-
տգէտ մարդուն սիրտը. որովհե-
տեւ սովորաբար այդպիսին է մե-
ծամասնութեան կարծիքի բուն
թարգմանը: Մինչեւ անգամ բարձր
աստիճան, ուսեալ եւ հարուստ ան-
ձերը կը խոնարհին տգէտին առ-
ջեւ որպէս զի անոր քուէն ստանան
Ա՛նք կը նախընտրեն անարդար
եւ վատ ըլլալ, քան թէ ամբոխին
սէրը կորսնցնել. աւելի հեշտ է
այդ անձերուն համար նուաստա-
նալ, քծնել, սողալ, քան թէ վե-
հանձն արիասիրտ եւ վճռական ըլ-
լալ. թիւր եւ մոլար կարծիքներու
տեղի տալ՝ քան թէ ասոնց դէմ
զինուիլ: «Հոսանքին դէմ լողալու
համար, կըսէ առած մը, զօրու-
թիւն եւ քաջութիւն պէտք է, մինչ-
դեռ հոսանքին հետ սատկած ձուկն
ալ կը լողայ»:

Բարոյական այս ազտոտութիւնը
սկսած է երեւալ միանգամայն սոռ-
բին դասակարգի մէջ, Աղբեցու-

թիւնն ու հակազդեցութիւնը հա-
ւասար են, կըսէ մեքենագիտական
օրէնք մը: Վերի դասակարգին
մէջ տիրող կեղծաւորութիւնը եւ
երեսպաշտութիւնը հաւասար չս-
փով կերեւի նաեւ ստորին դասա-
կարգի մէջ: Եթէ բարձր ու կիրթ
նկատուած անձերը իրենց յատուկ
կարծիքներուն տէր կանգնելու ա-
րիւթիւնը չունին, ալ ի՞նչ կըս-
պասենք ամբոխէն: Ինք ալ ան-
շուշտ կը հետեւի տրուած օրինա-
կին ու կը սկսի նենգիլ, խաբիլ,
բան մը ըսել ուրիշ բան ընել.
յար եւ նման ջոջ աղանդաւորն:

Այս տեսակ ժողովրդականու-
թիւն մը որ ձեւք կը բերուի ժո-
ղովուրդը շողմնելով, ա՛նկէ ճշմար-
տութիւնը ծածկելով, անոր ստու-
րին կիրքերը գգուելով եւ մանա-
ւանդ անոր մէջ տաղալութիւն սեր-
մանելով. չէ կարելի գորշելի չի
թափալ աղնիւ մարդուն: Այս ժո-
ղովրդականութիւնը ոչ միայն պա-
տաւար չէ, այլ նաեւ մեծ նա-
խատինք մը իր թիկնածուին:

Բարոյական այս ազտոտութիւն-
ները մաքրելու ամենէն հզօր մի-
ջոցն է այժմէն տրոյց մէջ ործաւ-
ծել ճշմարիտ հայրենասիրութեան
փառ զգացումը: Մի՛ք ազգային
մեծ գէպերու յիշատակութեամբ,
մեր ցեղական դարաւոր առաքի-
նութիւններու ապացոյցմամբ ոգե-
ւորենք հայ պատանիները դպրո-
ցական, յարկին տակ, միանգամայն
ի վեր հանելով մեր ցեղական թե-
րութիւնները եւ զգուշացնելով ա-
պագայ սերունդը նոյն սխալներու
մէջ ինչպէս:

(Շարունակելի)

ԱՌՈՂՋԱՊԱՀ ԸՆԴԱՆՔ

Յարգելի ընթերցողներ, անշուշտ
գիտէք որ ձեր գործածած կարի
մեքենային կամ ժամացոյցին պէս
մարմիննիդ ալ մեքենայ մըն է
բայց շատ սուղի բարդ ու փա-
փուկ կազմութեամբ մեքենայ մը
որուն գործունէութեան կեանք ա-
նունը կուտան, Դուք կը շնչէք
կը սնանիք, կը շարժիք, կը գաք ու
կը խորհիք, մէկ խօսքով կապիք
շնորհիւ ձեր մարմինը՝ մեքենայի
գործունէութեան: Արդ՝ որչափ
ատեն որ ձեր մարմնոյն բոլոր մա-
սերը անայլալ վիճակի մէջ գըտ-
նուին ու ձեր գործարանները ան-
փնտ մնալով իրենց պաշտօնները
անթերի կատարեն դուք բնաւ ցաւ
կամ անհանգստութիւն չէք զգար
եւ գոհութեամբ կըսէք թէ առողջ
ենք: Երեւէ՛կ թէ միշտ այդ վի-
ճակի մէջ մնալիք: Բայց այս ցա-
ւոց հոլովին մէջ ամեն բան անկա-
յուն է կըսեն եւ այդ շատ ճիշդ է:
Բնութեան զօրութիւնները եւ բը-
նութեան անտեսանելի արարած-
ները՝ հազարաւոր միջոցները
աչքերնին չորս բացած ձեղկը լըր-
տեսն են որպէս զի ձեր անփոյթ
գտնուած մէկ վարկենին, առող-

ջապահիկ կանոններու դէմ չզտիկ
ըմբոստութիւն մը ցոյց տուած ա-
տենիդ գան եւ ձեր գործարաններ
խանգարեն: Այնուհետեւ այլ եւս
մեքենան աւրուած է, կանոնաւոր
չգործիր ու դուք ցաւ, անհագո-
տութիւն զգալով տրտմօրէն կը
մրմնչէք թէ հիւսիդ էք: Եւ ի-
րաւունք ունիք տրտմելու որով-
հետեւ հիւսիդ բլլալ մեծապէս
թշուառ ըլլալ ըսելէ: Հարաշար կը
տուապիք եւ կիանքը ձեղի հա-
մար բեռ մը, տանջանք մը կը
գառնայ: Ամեն բան կընէք ձեր
առողջութիւնը, ձեր կորսնցուցած
էն թանկագին հարստութիւնը
գտնելու համար եւ այդ պատճա-
ռաւ նիւթական հարստութիւնը
այլեւս աչքերնուդ չերեւիր, զայն
ամբողջովին բռնկնելու եւ դիպ-
գործներու տրամադրութեան տակ
կը դնէք, բայց շատ անգամ կը
պատահի որ դարցեալ չէք բժշ-
կուիք: Բայց ո՞վ ըսաւ ձեզ թէ
բժիշկները կրնան հրաշքներ գոր-
ծել եւ ամեն հիւանդութիւն ա-
ռանց բաց առութեան բժշկել: Չի՛ր
ժամացոյցին անիւններէն մին կը
կատրի եւ դուք վիշ պէս կը գըտ-
նէք վարպետ մը որ կրնայ կառ-
րած մասին յար եւ նմանը շինե-
լով մեքենան ամբողջացնել եւ վե-
րստին գործունէութեան մէջ դնել:
Կը կարծէք թէ նոյն բանը կա-
րելի՛ է ընել ձեր մարմնոյն փա-
փուկ գործարաններուն համար ալ:
Չէ՛, կը սխալիք, եթէ ձեր գոր-
ծարանները ծանրապէս փնտաւած
են եթէ ձեր ուղիղը շուր կտրած,
թոքերուն մեծ մասը փտած կամ
երբոր աղբօրանութեամբ մը ստա-
մօքսնիդ կեղերով ծածկուած է,
բժիշկը չկրնար զանոնք փոխել
կամ նորոգել, իրաւ է բժշկու-
թիւնը հիւանդութիւններ դարմա-
նելու, բայց այսուած առողջութիւն-
նիր վերահաստատելու արուեստն
է, բայց դժբաղդաբար ամեն տե-
սակ եւ ամեն աստիճանի հիւան-
դութեանց համար չէ: Ուրեմն
ի՞նչ ընելու է. ծանր հիւանդու-
թիւնները որոնց դէմ բժշկութիւն
իսկ անգոր է՝ ճակատագրական
համարելով համբերութեամբ տա-
նելու է, ո՛չ երբէ՛ք: Եթէ ամեն
տեսակ հիւանդութիւն չենք կրնար
դարմանել, աւելի լաւ, կը դիմենք
այն գիտութեան որ մեր առողջու-
թիւնը անվթար պահել, բնաւ հի-
ւանդ չըլլալ կը սովորեցնէ մեզ:
Առողջապահ ըլլանք, սորվինք մեր
մարմնոյն կազմութիւնը եւ մեր այլ
եւ այլ գործարաններու պաշտօնա-
վարութեան խելամուտ ըլլանք,
ճանչնանք մեզ շրջապատող իրերն
ու բնութեան ազդակները, եւ այն
ատեն պիտի գիտնանք միշտ ա-
ռողջ մնալու, բնաւ հիւանդ չըլ-
լալու արուեստն ալ: Ու եթէ հա-
կառակ մեր խիստ առողջապահ ըլ-
լալուն երբեմն պատահի որ դիպ-
ուածով հիւանդանանք պիտի կըր-
նանք շուտով բժշկուիլ հիւանդու-
թեան առաջի նշանները երեւելուն

պէս բժշկին դիմելով : Առողջապա-
հութիւնն ու բժշկութիւնն , երկու
իրար յայնչող , իրարու օժանդա-
կող գիտութիւններն են և երկու-
քին ալ նպատակը մեր առողջու-
թիւնը պահպանելն է : Մին չի-
ղուր որ հիւանդանոցը իսկ միւսը
կորսնցուցած առողջութիւնն իսկ
վերահաստատել : Գայտնի է թէ
ամեն մարդ բժշկի չկրնար ըլլալ
բայց ամեն մարդ ստիպեալ է իր
առողջութեան հոգ տանիլ և ա-
ռողջապահ լինիլ , որովհետեւ ա-
ւելի լաւ է և դիւրին հիւանդ չըլ-
լալը քան թէ հիւանդանալէ յետոյ
բժշկուիլը : Բայց դուք որ պզտի-
կուց ձեր յաճախած վարժարանին
մէջ բնական գիտութեանց և ա-
ռողջարանութեան նախնական ծա-
նոթութիւններն իսկ չէք ստացած
չէք կրնար ձեր առողջութիւնը
պահպանելու արուեստը լաւ սոր-
վիլ , վասնզի առողջապահութիւնը
բարդ գիտութիւն մըն է և մաս-
նաւոր չէ գիտական գոնէ քիմի մը
պաշար չունեցողներուն : Առողջա-
պահական ծանօթութիւններու և
կանոններու մասին բնաւ յոռետես
մի ըլլաք անոնց եւրոպական ժո-
ղովուրդներու մէջ ընդհանրապէս
չուտով իր մեծամեծ օգուտները
ցոյց տուաւ : Հիւանդութիւնները
նուազեցան , մատաղ հասակի մէջ
մեռնողներու թիւը պակսեցաւ և
կէս դարու ընթացքին մէջ մար-
դոց տարին 35 էն 45 ի բարձրա-
ցաւ : Եթէ չէք փափաքիր տուժել
ձեր տղիտուկեան շնորհիւ եթէ
չէք ուզեր հիւանդանալ կարգա-
ցէք առողջապահական գրքեր ու
յօդուածներ և մանաւանդ ձեր
կեանքի քրիթիկ շրջաններու մէջ
դեռ չհիւանդացած իսկ մի մոռ-
նաք բժշկին դիմել , ո՛չ թէ ան-
կէ դեղագիր - այլ առողջապահա-
կան խրատներ առնելու համար :
Քանի՜ , քանի՜ երիտասարդներ ի-
րենց արբուեցի հասած տարիներ
ու մէջ տեսակ տեսակ հիւանդու-
թիւններ կը ժառանգեն ու ախ-
տերու տէր կըլլան , քանի՜նր շու-
այտութեամբ ու ցոփութեամբ ի-
րենց գերեզմանը ձեռքովին կը
փորեն : Նոր ամուսնացած ամու-
ններ , մանաւանդ դիւատի հարսեր
որքան հիւանդութիւններու են-
թակալ կը լինին միայն իրենց
տղիտուկեան և բժշկին դիմելու
անփութութեան շնորհիւ , ի քիսա
իրենց և դաւակոյց առողջութեան :
Ջանացէք առողջապահ լինիլ հա-
կառակ պարտադրին դոնէ ձեր
կեանքի հիմնական փոփոխութիւն-
ներ կրկու ժամանակ (արբուեցի
համարն , ամուսնութիւն , յղու-
թիւն եւն.) դիմեցէք բժշկին ա-
նոր տուած առողջապահական կա-
նոններուն համեմատ ապրելու հա-
մար , և հաւատացէք որ շուտ պի-
տի շահիք ու պիտի շահեցնէք ,
որովհետեւ ձեր առողջութիւնը մի-
այն ձեզ համար կարեւոր չէ , ուզէն
ու մարդկութիւնն ալ կը պահան-
ջեն որ դուք միշտ առողջ մնաք ,

ձեր պարտքերը անթերի կատա-
րէք , աշխատեք , և միայն առողջ
զուակներ արտագրէք :

Պ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարտի 10 փետր. 1899.

«Կապիտոլի մօտ է Տարախան ժայռը» .
համանման բացատրութեամբ կը կրկ-
նեմ .

«Մարտի 10 շատ մօտ է Մօնթէ-Գար-
լօ» . հարկ չկայ Մարտի 10 նկարագրել ,
մին այն վաճառական նաւահանգիստնե-
րէն , ուր ապահովուած է յաջողութիւ-
նը համեստ , չափաւորեալ աշխատողին
համար . պատրաստ չը կարծուի այդ
խնդրող յաջողութիւնը . ոճի սեղմու-
թիւնը անմիջապէս յաջողութեան մօտ
ապահովուած բառը տողել տուաւ :

Տենչալի յաջողութիւնը ձեռք ձգելու
համար , թէ ինչե՞րու պէտք է բաղնիկ
յարասեւ աշխատութիւն , տոկոսն եւ
յամառ կամք , ժողովուրդ կեանք , չար-
քաշ ու պարզ կենդանակարութիւն մի-
ակ չէնք են պայմանադրուած յաջո-
ղութեան :

Մաքառի հազար ու մէկ պատահար-
ներու դէմ , կուրծք պարզել ձախողու-
թեան յարուցած բոլորն ու ձիւնին ,
տոկոս հազար ու մէկ մեքենայութեանց ,
վերապահ աղէտներուն , ընթանալ ան-
յողողող , ուղիղ , անսայթաք , չիփշի-
տակ , վիրաւորուիլ ու դարձեալ ար-
իւնդուայ քայլերով դիմել ի չու կէտ-
առանց ընկրկելու :

Եւ ան՝ այդ վերջերու սպին է որ
քեզ պիտի տայ ակնկալուած յաջողու-
թեան անխառն երջանկութիւնը , ո՛չ
թէ վայրկեանական տաքնապն , յուզում-
ներն , կեանքի ընդհանրական տեղդող կրծ-
կումներն , որք չարունակ կ'սպառնան ,
Մարտի 10 6—7 ժամ հեռու գտնուող
Մօնթէ-Գարլօ քաղաքի մեծ խաղաբաժնի
սեղանին շուրջ :

Վայրկեանապէս յաջողութեան տենջն ,
դուն ըսէ տենջն , տակաւ սկսած է եռ
զալ հայ անփորձ երիտասարդներու
սրտին մէջ :

Ո՛վ չը բաղձար մէկանց հարստանալ .
Մօնթէ-Գարլօյ երեւակայական
պատմութիւններն թուեղ կը հանեն
Մարտի 10 բնակող երիտասարդի սիրտն ,
ու տաղտկացած , կերպիւ մը իրական
յաջողութեան յապաղումն , կ'որոշէ եր-
թալ , աւելին ընթանալ յաջողութեան
ոսկիծաղ զիջուհոյն ոտքը , որ կը բաղ-
մի Մօնթէ-Գարլօյ բաղնիկին շուրջ :

Կարծես ուխտի կ'երթայ . — կ'առնէ
ձեռք մը մաքուր լաթ , քիչ մը կը ջրա-
կէ ինքզինքը . բարեհաւ , բարեբիշ կը
զարդարուի , կը ձոխաթնէ մսխուծի
պիւտածէն , եւ կը նստուի Նիս եւ ան-
տի Մօնթէ-Գարլօ տանող շոգեկառքին
մէջ . 7 ժամ վերջ հոն է . իբրեւ միւր-
ոնաւէր երկրպագու մը , ոսկիծաղ , ոս-
կիփայլ , ոսկեպատ յաջողութեան դի-
ցուհոյն : Կը բարեւուի իսկոյն , կը
պատուուի , կը յարգուի , եւ յայնժամ ,
երբ մեղկօրէն ձուռն դրած կ'երկրպա-
գէ խաղի-խորանին առջիւ , իսկոյն
մերկ կըզայ ինքզինքն , ու տերուով
ծածկել կը փորձէ իր մերկութիւնն :

Ո՛րեւ Սղամ , Մօնթէ-Գարլօյ մէջ :
Ո՛վ խաբէց քեզ , «խեղճ երիտասարդ»
— ու մերկ կը վախճուի դուռս , կո-
րուած զրպանի մէկ քանի հարիւր ֆը-
րանքն , արդիւնք տաժանելի ու պատ-
ուաբեր աշխատութեան :

Այս վախճումը պիտի ունենայիր
դուն , Պ. :

7—8 տարի չարունակ Մարտի 10 մէջ
աշխատած , չատերէն սիրուած , յար-
գելի դարձած էիր , պատու քու զրգ-
րոցին , հայրենիքիդ ու ազգիդ եւ հետոյ

տարիւ Ս . անոր հազարաւոր ֆրանք-
ներն ալ վրայ տուիք , վրայ տուիք
ձեր կանոնաւոր գործ , ու առօրեապարտ
կծիկ կը գնես Բարիդ . ո՛վ խաբէց
քեզ . — օճը :

Ուրիշ երիտասարդներ ալ կը հետե-
ին ձեզ , նայինք ի՞նչպէս պիտի վե-
րադառնան . — «Մարտի 10 մօտ է Մօն-
թէ-Գարլօն , Տարախան գտնուի» :

Հմայեալ Սասնոր

ՄԱՐԻԱ ԼՈՒԻԶԱ ԻԺԽԱՆՈՒՅԻՆ
ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՍԸ

Բարեխիշտակ իշխանուհին
յուզարկաւորութիւնը Յունի 27ին
Սօֆիայի մէջ կատարուեցաւ մեծ
շքով :

Առաւօտեան ժամը 10ին թա-
փորը պալատէն ճամբայ ելաւ .
նոյն վայրկեանին 21 թնդանօթի
հարուած սկսան լսուիլ և քաղա-
քին բոլոր եկեղեցիներու զանգակ-
ները՝ հնչել : Թափորին առջեւէն
կ'երթար Սօֆիայի ոստիկանա-
պետը լսուած մը հեծեալ ոստիկան-
ներով , իրեն կը հետեւէին Ջին-
ուորական վարժարանի հրամանա-
տարը , Սպայակոյտին պետը և ա-
նոր լիկնապահը , զինուորական
վարժարանի աշակերտներէն վաշտ
մը դրօշակներով և նուազով , 6րդ .
հետիոտն զօրաց զանգէն վաշտ մը
դրօշակով և նուազով , 4րդ . թն-
դանօթաձիգ գունդէն և 1. ու 2րդ .
հեծեալզօրաց գունդէն մէկմէկ ջո-
կատ , և իշխանուհին նուիրուած
պսակներով բռնաւորուած կառ-
քերը , որոց մէջ էին ի մէջ այլոց
իշխանական Տունէն , վեհապետ-
ներէ և ազնուական բարձր դասա-
կարգէն ազգականներու զրկած
պսակները : Յետոյ կուգային ֆ .
Պօլսոյ կաթողիկ արքեպիսկոպոսը
տեղւոյն կաթողիկ կղերով , կա-
թողիկ հոգեւորական դպրոցի ա-
շակերտներով և Ռուսոսքի կա-
թողիկ եպիսկոպոսէն զրկուած
պատգամաւորներով : Կղերին կը
հետեւէին պալատի բարձր պաշտօն-
եայները և իշխանուհին սպասա-
ւորներն ու սպասուհիներն և ապա
գազաղակիր կառքը , որուն առ-
ջեւէն կը բուլէր պալատի մարէշալ
կոմս Պարպուլօն սուգի համագ-
գեստով կուռքին աջ կողմէն , անոր
ծոպերը բռնած կերթային նախա-
բարապետ Պ . կուէքօֆ , ներքին
գործոց նախարար Պ . Ռատօսլա-
վօֆ և ազգային ժողովին նախա-
գահը , ձախ կողմէն կ'երթային
պատերազմական նախարարը , ա-
ռեւտրական նախարարը և Սօ-
ֆիայի քաղաքապետը . Ասոնցմէ
զատ գազաղին երկու կողմէն կ'եր-
թային մէկմէկ գնդապետ , մէկմէկ
ենթասպայ զինուոր . վարժարանէն
և 12 զինուոր հեծեալզօրաց 2 րդ .
գունդէն :

Գաղաղակիր կառքը և ձիերը
իրենց ճօն վարդերով և սպանե-
րով հիացում կը պատճառէին :
Կառքին անմիջապէս ետեւը կը

գտնուէր Ն . Ա . Բ . իշխանը զօրա-
պետ Նիքօլայեֆի և գնդապետ
Մարքօֆի հետ : իշխանին կը հե-
տեւէին աջ կողմէն Աւստրիոյ կայ-
սեր ներկայացուցիչ արհիդուքս
Սալվաթօր , ձախէն Սաքս-Բո-
պուրկի Ֆիլիք իշխանը . ապա կու-
գային Սերպիոյ նախկին թագա-
ւոր Միլան և Պաւարիոյ Ջիկֆրիտ
դուքսը , Սաքս-Գոպուրկի Լէօթօլտ
իշխանը , Սուլթանի , Չարին , Ֆը-
րանսական կառավարութեան , Ռու-
մանիոյ թագաւորին , Բարմայի
Դուքսին , Սաքս-Գոպուրկ-կօթա-
յի , Շլէզվիկ Հօլշթայնի , Մէքլեն-
պուրկ Նվէտինի , Պէկիոյ թագա-
ւորին , Գերմանիոյ կայսեր , իտա-
լիոյ և Յունաստանի թագաւորին ,
Անգլիոյ թագուհւոյն և Ֆրանս-
սայի Հանրապետութեան նախա-
գահին արտասովոր պատուիրակ-
ները և ներկայացուցիչները , ու-
րոնցմէ ետքը կուգան Սօֆիայի
գիւանդիտական մարմնոյն բոլոր
ներկայացուցիչները , հանրային
չինութեանց , երեւմտական , արդա-
րութեան և կրթութեան նախա-
բարները , պալատականներ , հին
նախարարներ , բարձրաստիճան
պաշտօնեաներ , զանազան հասա-
րակութեանց հոգեւոր պետեր և
բազմաթիւ համայններու և ընկե-
րութիւններու ներկայացուցիչներ :
Թափորին տեսարանը որքան
շքեղ այնքան յուզիչ իր սգոյ նը-
շաններով : իշխանը յայտնապէս
ցաւէ ընկճուած կերեւար իր թալ
կացած և տխրամած դէմքով :

Ժամը 11 1/2ին թափորը հա-
սաւ կաթողիկ Մայր եկեղեցւոյ
առջեւ , ուր իշխանը և բարձրաս-
տիճան սպաներ գազաղը իրենց
ուսերուն վրայ առնելով եկեղեցւոյ
մէջ տարին , ուր սքանչելի ճաշա-
կով և պարագային յարմար եղա-
նակով զարդարուած էր : Տխուր
արարողութիւնը և երաժշտութիւնը
շատ սրտայող տպաւորութիւն մը
ըրաւ հանդիսականաց վրայ և երբ
արքեպիսկոպոսը փոփոխութիւն հոգե-
լոյս իշխանուհին հոգեւոր փըր-
կութեան համար յատուկ ազօթք
մը արտաստեց , չարտասուող աչք
չի մնաց :

Նոյն օրը եւրոպացի արտասովոր
պատուիրակներու և ներկայացու-
ցիչներու մեծամասնութիւնը մեկ-
նեցաւ Սօֆիայէ :

Գիշերը իշխանուհին մարմինը
անշնչով փոխադրուեցաւ ֆ . Պօլսոյ
Միլենայի կառավարին մէջ կը
գտնուէին իշխանը , իր հետեւող-
ներով , Ն . Ա . Բարձրութեան եղ-
բայր Ֆիլիք իշխանը , Դուքս Ջիկ-
ֆրիտ , կոմս Մէնստօրֆօլդի , նա-
խարարները և սպայակոյտի ան-
դամները , որոնք գիշերը ժամը
10 1/2ին վերադարձան Սօֆիա :

ԱԼՊԱՆԻԱ

Ալբոնոմի նամ Սօֆիա կապէ-
թաւը եազմը տըր . «Սուլթանըն
էմրի իլէ Ալբնավուարըն իէյիս .

էրի իրենք տէ թօրանուպ, վալի-
հաֆըզ բաշանըն ըրիստէթի թա-
թընտա մէնլիս իթտիլէր, էֆնի-
յէթլի մէնպատան տընան մալիս-
մաթու պինաէն, պու մէնլիս Մա-
քէթոնիտա գարընըզլըզ գուհու-
րինտէ խրիսթիոնարը գըրտըր-
մագ իշիւն Արնափուտարը հազըր-
լամագ մագսէտի իլէ թէնէմմիւ-
օլմըն տըր: Մէնլիս յունվար 14-տէն
18 է գաւառ տէվամ իթտի: պիւ-
թիւն արնափուտ ընլիսլէրի մէն-
լիստէ հազըրտըլար, պունլար Սուլ-
թանտան եօլանըլմըն օլան մուրա-
խասլարա վատ իթտիլէր քի Սուլ-
թանըն էմիլէրինէ իթտաթ իտէ-
նէթլէր: »

— Սօֆիստան Գօրէսք. բօլիսիւ-
քէ պիլտիթիօրլարի քի, մէքէզի
Սօֆիստա օլան Մաքէթոնիտա գօ-
միթէթի շիմտիքի հալ պիւր շէյ
եաքմագ միւնքինսիզ վէ ֆաթիտէ-
սիզ օլանալը կէօրէրէք, իլք պու-
հար իշիւն հազըրլանմըն օլան գա-
րարարը տահա սօնրայա թէնէթիւր
իթմիշ տիւր:

Մէքէզի կազէթա տէյօրքի
գօմիթէ Մաքէթոնիտա օլան մէ-
մուրարընա իշպու գարարընը պիւ-
տիւրմիշ տիւր:

Ֆաթաթ Մաքէթոնիտա գօմի-
թէլէրին օրկանը օլան կազէթա-
լար պու հափատիս եալան տըր
տիօյըլար:

— Մէքէզի Պուզընտէ օլան
Տրիքա նամ արնափուտ գօմիթէ-
սինին Սքիթի իսկազէթասը պէր-
վէնէն աթի եազմըն տըր:

«Թիւրք թէվարիսինի օգուտը-
ղըմըլտա նազարըմըլա վուրիօր
քի Սիւլէյման իքինէրտէն պէրու-
Օսմանը տէվէթինին երտըղը
սէօյիւնմէկէ պաշալմըն տըր, պու-
նուն սէպէպի ասքէր գուվվէթինին
էքսիլմէսի օլմայուպ, իլլա հիւքիւ-
մէթ մէքէզիինին թէրթիպսիլիկի
ուլիոնսըզլըղը վէ պունտան իլէրի
կէլէն իտարէսիլիք. իշթէ պու-
սէպէպլէրլէ թիւրքիս պիւր պիւրի
արգասընտան զայպ իթտի հուն-
գարիսը, էսքլափօնիայը, իւրը-
վաթիսը, թրանսիլվանիայը, Պա-
նաթը, Պուգօվինայը, իւրըմը վէ
սայիրէյի. ֆաթաթ պունա մու-
ղայիւր, պու գարարլարա մուգա-
պիլ թիւրքլէրին ազըլարը պաշ-
լարընա կէլմէտի: Սուլթան վէ
քէնտի նազըրլարը թապալարընը
րահաթլանտըրաճագ եէրտէ, աք-
սի օլարագ Մաքէթոնիտա վէ Ալ-
պանիս վիլայէթլէրի 200 սէնէ է-
վէլքի հալտէն տահա աշալը թու-
թայօրլար:

— Մէքէզի արնափուտ կազէ-
թասընտա աթիտէքի իսպարէ
միւնտէրիճ տիւր:

«Պազը Պուզընտէ կազէթալարը
շու կիւնլէրտէ չալըշըյօրլարքի
Արնափուտար վէ Ուլահլար պէյ-
նինտէ իթթիֆագ հասըլ իտուպ
տէ Պուլկարլարա վէ Սլափօնլարա
գամըն ընգապէթ իթսիլէր: Ֆա-
թաթ պիւր, Արնափուտար Պուլ-
կարլար իլէ պիւր պօյընաըրըզ ալ-

թընտա էվիմէքտէ օլտըղըմըլ-
տան Պուլկարլարա գարըն տուա
խառտամըլ վէ խառտամէթիմիլ
եօգ տըր: Հէր միլլէթ քի սէրպէս-
տիլէթի իշիւն վէ ումուլըն տիւշ-
մանընա գարըն ճէնկէլէմէքտէ տիւր,
մէվալիմ ալթընտա պուլընանլարըն
հիւսնի թէվէտնէլէնէ լայըզ տըր,
խաթէր Ուլահ օլտուն իսթէր Պուլ-
կար, Բուս, Թիւրք վէ սայիլէր,
քէֆասընտէ պիւրիմ իշիւն պիւր շէյ
տիւր: Էվիմէքտէ օլան միլլէթլէ-
րին սէրպէսթ օլմայարընա մուա-
վէնէթ իտէն Բուսիտա օլմըն վէ
չօգ միլլէթլէր Բուսլարա մինէթ-
տար պուլընմըն իքէն Սլափօնլարա
գարըն հարէքէթ իթմէք նանքէօր-
լըզ տըր: »

ԵՆՆԻ ԹԻԻՐՔ ՎԱՀՇԻԼԻՔԼԵՐԻ

Իշմիւրտէն պու սաթաթ էլիմիլէ
եէթիշէն պիւր մէքթուպ աթիտէ-
քի մալիւմաթը վէրիօր:

«Պուրտա Պայրամըն իլք կիւ-
նիւնտէ տէշէթլի մէնգարէլէր ա-
շըլտը: Կիւրիտի պիւր գաշ թիւրք-
լէր պըշպուր էլլէրինտէ խրիս-
թիոնարըն իւղէրինէ հիւսնիմ
իթտիլէր, պիւր թազըմ էօլէնլէր
վէ եարէլիլէր վարտըր, շիմտիլիք
պունլարըն գաշ քիշի օլտըղը պի-
լինմէյօր: Աւսարիայը պիւր պան-
քէր ազըրճա եարէլէնմիշ օլմաղլէ
վէֆաթ իթտի: Պու տէշէթլէր
սէպէպի իլէ էհալտէն բէք չօղը
վաքօրլարա գաշտը: շիմտի շէն-
լին խրիսթիոնարը սիւհալանա-
րագ թիւրքլէրին հիւսնիմինէ քէն-
տիլէրին մուհաֆաղա իթմէք ի-
շիւն հազըր տուրըլօրլար:

Հիւքիւմէթ պու վուգուսթտան
ֆէնա նէթիճէլէր հուսուլա կէլէ-
նէկինի անլայուպ, տէրհալ ասքէր
շըզարթուր վէ գահվէնանլէրտէն
միւսրիմիլէրին պազըլարըն տէր-
տէսթ իթտի: Քէզա հիւքիւմէթ
չալըշըյօր քի խրիսթիոնարըն Թի-
լահլարըն ալըն, ֆաթաթ պու
միւսքին օլմայաճագ տըր: Գօնսօ-
լօսլար տէրհալ թէլէկրաֆլար վէր-
տիլէր:

Իշթէ մէքթուպըմը եազտըղըմ
սաթաթտա 3 առէտ հարպ վաքօր-
լարը կէլտիլէր, պիւրի հօլանտա,
պիւրի Աւստրիա վէ պիւրի տէ ինկ-
լիզ զըրհըսը տըր: »

ԻՌԻՍԻԱ ՎԵ ՊՈԻԿԱՐԻՍ

Բէթէրպուրկտա պազը ճէրի-
տէլէրին զաննընա կէօրէ, Պուլ-
կարիա վիւքէլասընն տէկիշիմէ-
սի սէպէպլէ Բուսիտա վէ Պուլկա-
րիա պէյնինտէ պիւր գաշ սէնէ-
տէն պէրու ճարի օլան մուհապ
պէթի սէմիմանէ պօղուլաճագ վէ
քէզա Բրէնա Ֆէրտինանտըն Բու-
սիայա տօսթլըղը տէվամ իտէմէ-
յէնէք իմիշ: Ֆաթաթ պու գան-
նիյաթտա պուլընան ճէրիտէլէրին
իշիւնն տէրէնէտէ էհէմմիլէթի

օլտպիլիւր: զիւրա էն մուհիմ վէ
նիմ ընէմի րուս կազէթալարըն ա-
լա պու պապտէ պիւր էֆքիտար պէ-
յան իթմէթիլէր: Պուստոն պուշ-
գա Պուլկար միլլէթի Սթանպու-
լօֆ վազթընտա սէնէլէրճէ Աւստ-
րիա բօլիթիգասընա խըտմէթ իթ-
միշ օլմասընտան պիւր ֆաթիտէ կէօ-
րէմէտիկի կիպի, շիմտի տալիս
Բուսիտը թէնք իտուպտէ պաշգա
տէվէթլէրէ մէյլ վէրէմէյէնէք տիւր:
Մալիւմիմիլ օլտըղը իւղէր Պուլ-
կարլարըն էն պէօյիւք արղուլարը
Թիւքիտա էվիմէքտէ օլան միլ-
լէթտաշլարընը գուրթարմագտան
իպարէթ տիւր: պու աղըսլա հէ-
թիւմէք իշիւնտէ Բուսիտան մու-
սվէնէթի էլլէվ վէ իշթիլա օլ-
տըղընա ումուլ Պուլկարիա էհա-
սի գանի օլմըն տըր:

«Պուլկարիանըն եէնի տալիյէ
նազըրը Մ. Բ. Բէշէֆին, մէմու-
րիյէթէ կէշմէսի ազէպինտէ իլք
իշի օլմըն աղը կազէթալարըն յահ-
քիւմ օլան մէսուլարը հապստան
գուրթարմագ իշիւն Բրէնա հազ-
րէթլէրինն աֆլընը էլտէ իթմէք,
Մ. Բ. Բէշէֆին պու մուվաֆա-
գըլէթտէն տօլայը թէպիւրիք իտէ-
րէք էհալի վէ կազէթալար նամը-
նա թէշէքքիւրթլըմըլը պէյան
իտէրիլ:

«Բուսուգտա «Բ. Գօվաշէֆ
պիւրատէրլէր» նամ պանգանըն կէ-
շէն սէնէ իֆլաս իթմիշ օլմասըն-
տան տօլայը բէք չօղարըն միւ-
թէզարըն օլմասը մալիւմ տըր:
մէքէզիւր պանգանըն մուհասէպա-
թը հիւքիւմէթ մարիֆէթի իլէ
կէօրիւմիլ օլուպ, թանղիմ օլընան
ընէմի պիլանչօտա 2613844 ֆր.
ալանագ վէ 2,410,587 ֆր. պօրճ
շըգմըն օլտըղը Գոշիլէ տէ պուշ
գան եազըյօր:

«Պու բաղար էրթէսի ազշամ
վիւքէլա ընլիսի Մ. Կրէքօֆըն
բօլիթիգա տօսթլարը՝ պունլար
Սթանպուլօֆիսթ թէսմիլէ օլը-
նըլար՝ վէ Բառալափօ Բարթի-
սինէ մէնսուպ ֆըրգա ընլիսլէրի
Սօֆիստա թէնէմմիւ օլընմըլար:
պու թէնէմմիւտէ հէր իքի թա-
րաֆ իթթիֆագ հասըլ իտուպ,
պունտան սօնրա պիւր բարթի թէշ-
քիլ իտէրէք, «սէրպէստիլէթ թա-
րաֆտարանը» թէսմիլէ օլընաճագ-
լար:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

— Ֆրանսանըն Ճիւմհուրիյէթ
ընլիսի Մ. Ֆէլիքս Ֆօր Բունվ. 3
տէ գաֆիլէն վէֆաթ իթմիշ տիւր:
Շէհրիմիլին ֆրանսըզ գօնսօլօ-
սընա կէլէն ընէմի թէլէկրաֆ Մ.
Ֆօրըն տամլատան (աքօրլէքսի)
սաթաթ 6 տա վէֆաթ իթմիշ օլտը-
ղընը պիլտիւրմիշ տիւր:
Կէլէն չայէթաթ վէ տըլնան
խուսուսի մալիւմաթլարա պինաէն,
Մ. Ֆօրըն անարշիսթլէր էօլտիւր-
միւլէր:
Պու հաֆթա զարֆընտա Բարիս-

տէ անարշիսթլէրին պազը իսթի-
լալա սէպէպիլէթ վէրմիշ օլտըղընը
ֆրանսըզ կազէթալարը տալիս
եազմըն իտի:

— Սօֆիստաթի Ալման վէ Պէլ-
ճիգա գօնսօլօլարընա (աթան տիւր-
լօմաթիգ) Սուլթան իքինէի Օս-
մանիյէ նիշանլարը վէրմիշ տիւր:

— Ֆրանսանըն եէնի Սթանպուլ
էլլիսի Մ. Գօնսթան Սուլթանտան
գապուլ օլուսուպ էվրագը ընէմի-
լէլէրին թազաթիմ իթմիշ տիւր:

— Ինկիլլէրա բարլամէնթի Գը-
րալիցանըն պիւր նուլթը իլէ աշըլ-
մըն տըր:

— Ֆրանսա վէ Ինկիլլէրա տէվ-
լէթլէրի պէյնինտէ թահթը միւ-
գաքէրէտէ օլան մէսէլէլէր սուրէ-
թի տօսթանէտէ հալ օլընմայա
պաշալմըն, վէ Ինկիլլէրա Աֆրի-
գանըն Նիւ սահիլլէրինտէ ֆրան-
սըզլարըն պազը հազլարընը թա-
նըմըլար: Քէզա Պահր. Էլ-Ղազէլ
վէ Ուպանի մէսէլլէրինտէ տալիս
իքի տէվլէթ պէյնինտէ իթթիֆագ
հասըլ օլտպիլէնէկինի Բարիստէն
պիլտիւրմիշ տիւր:

— Բրէնան իրատէսի իլէ Ֆիլի-
պէ, Բաղկրատ, Թըրնօվա, Շուս-
լա, Օսման Բաղար վէ Ախսուլն-
տօքի Թիւրք մէքթէպլէրինէ իու-
նէթէն հիւքիւմէթ թարաֆընտան
7000 ֆրանք իհաա օլմըն տըր:

— Բէթէրպուրկտան Բօլիթիլէ
Գօրէսք. ա վէրիլէն մալիւմաթա պի-
նան, թէրքի սիւհա մէսէլէսի
պազը տէվլէթլէրտէն նիմ տէրէնէ
գապուլիլէթ պուլմըն տըր: Շալէ-
աթա կէօրէ՝ Ինկիլլէր վէ իթալիպ
տէվլէթլէրի՝ պու պապտէ Բուսի-
տանը կէօթլէրմիշ օլտըղը ճէտվէ-
լին պազը նօթթալարընա իթիւրազ
իթմիշ տիւր:

— Վարնատա, Մաքսուտ աղա
նամ մահալէ եազըն թաշ օճաղը-
նըն պիւր թարաֆը երգըլմըն, օ-
րատա չալըշմագտա օլան միլլէթ-
տաշլարըմըլտան իքի քիշի էվիլ-
միշ տիւր: պունլարտան պիւրի տիւն
վէֆաթ իթտի, տիկէրի պայլըն
հալտէ խաթաթալանէյէ նազլ օ-
լընտը:

ԶԱՍԻՐԷ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա, 6 Փետրվար	
Պուշսայ	
Վահոն, լիպրա 55-58 հէք 8.08-10 ֆ	
Արապա, 55-60 հէքթ. 8.60-11.60,	
Արքա	
Լիպրա 42-50 հէքթ. 6.20-6.40 ֆր:	
Ֆասուլիս	
100 օգ. 15-18 ֆր. մալընա կէօրէ:	
Մըւրը	
55-57 լիպրա. ֆիլ 6.6.5:	
Կիւնտէ 10-15 արապա վէ 10-15	
վահոն պուլտայ, 5-6 արապա ար-	
բա կէլլէքտէ տիւր:	
Ֆասուլիս 1-2 արապա:	
Արապա մուսթէլէսի նարօլէօն 21 ֆր.	
հիւսպը իլէ:	